Տ. ՋՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ. Զորայր քհն. Կարապետյանը ծնվել է 1974 թ. հունվարի 1-ին, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում: 1980–1990 թթ. ստացել է միջնակարգ կրթություն տեղի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցում: 1990 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց: Սարկավագության աստիճան ստացել է 1993 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոս Նախասարկավագի տոնին՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի:

1994 թ. ծառայել է Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում, այնուհետև ուսումը շարունակել Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

1996 թ. ծառայել է Վիրահայոց թեմի Ախլցխայի Մեծ Պամաճ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում և այնուհետև ծառայության անցել Արագածոտնի թեմում՝ կատարելով Արագածոտնի թեմի դիվանապետի պաշտոնը, իսկ 1997 թվականից ԱՄՆ-ի Արևելյան թեմի ՀՕՖ կազմակերպության գրասենյակի Արագածոտնի թեմի ներկայացուցիչն է: 1998 թ. հուլիսի 1-ից նշանակվել է Կարբիի Ս. Աստվածածին եկեղեցում որպես տեսուչ: Քառասնորդական պահեցողության շրջանի ավարտից հետո քահանայագործելու է նույն եկեղեցում: